

աշխատանքով, նիւթականն էլ հաւաք-  
ւած է նրանց զանեմբավ եւ, դժբախտա-  
րար, սակաւարիւ գրասէր բարեկամ-  
ների աջակցութեամբ։ Այս վերջնների  
շարքին մասնաւարապէս պէտք է յիշել  
հանգուցեալ թժ. ձ. էրկանեանի անու-  
նը, որ քէ՛ անձնական զինոգութեամբ  
եւ քէ՛ քաջալերելով նիւ - նորքի բա-  
րեկամներին՝ բանգագին ծառայութիւն  
հասցրեց Ն. Գ. Բ.-ի գործին։

Հրատարակւած 10 հասորից առաջին  
վեցը տպած է 1500-ական օրինակ,  
վերջին չորսը՝ հազարական, ընդամե-  
նը, ուրեմն, 13,000 գիրք, որից, եօրը  
տպաւայ ընթացքում, կանխիկ դրամով,  
ժախտել է 2023 օրինակ, որ այնեան էլ  
սպափի բերող բարենիշ չէ «արգոյ ըն-  
րեցող հասարակութեան» համար։  
Ն. Գ. Բ.-ի պատճեան համար, բայց օգ-  
տակար գործը արժանի է աւելի ջերմ  
քաջալերանի։

Ի վերջոյ, առաջ բերենք Ն. Գ. Բ.-ի  
հետեւալ կոչը, որ, կարծում ենք,  
մեկնութեան կարիք չունի։

#### ԿՈՉ ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒԻՆ

#### ԵԽ ՀԱՄԱԿԻՐՆԵՐՈՒԻՆ

1929-ի աշնան էր, որ խումբ մը մը-  
տաւորակամներ հիմք դրին նահատակ  
Դրագէտներու Բարեկամներ հրատա-  
րակչական ընկերութեան, նպատակ ու-

նենալով հաւաքել եւ հրատարակութեան  
տալ արեւմտահայ նահատակ կամ մե-  
ռած գրագէտներուն երկերը։

Արդէն կը բեւակոխենք մեր գոյու-  
թեան եօրներորդ տարին, եւ հակառակ  
տնտեսական տագնապին՝ ուրախ ենք  
յայտարարելու, որ կրցեր ենք երատա-  
րակել արդէն ՏԱՍԼ գեղեցիկ եւ ըն-  
տրած հասորներ, իրականացնելով մեր  
մատինաշարին առաջին շարքը։

Պատրաստ դրամագլուխով մը չէր, որ  
գործի ձեռնարկեցինք։ Շնորհիւ հիմնա-  
դիրներու աննահանջ եւ անձնելը գոր-  
ծուելուրեան, ինչպէս նաև ժամի մը  
նիւիրատուներու եւ հաւատարիմ ընթեր-  
ցողներու համակրութեան, հրատարակ-  
չական կեանեին մէջ անհրաժեշտ ձեռ-  
նարկ մը դարձուցինք։ Պէտք ունենք  
սակայն նոր օժանդակողներու եւ հա-  
մակիր ընթերցողներու, այս գեղեցիկ  
մատինաշարը շարունակեն համար։

Կը հաւատանք, որ այս կերպով մեր  
նահատակ գրագէտներուն յիշատակը  
յարգած ու յաւերժացնեցած պիտի բւ-  
լանք, իբրեւ նիւիրական պարտականու-  
թիւն։

#### Ա. ՎՐԱՑԵԱՆ

#### ՄԿՐՏԻՉ ՊԱՐՍԱՄԵԱՆ

#### ՏՈՒԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

#### Շ. ՆԱՐԴՈՒՆԻՆ

#### Կ. ՍԱՍՈՒՆԻՆ

### «ԶԻԱՐԹՆՈՅ» ԽԱՐԵՎԳԻՐՔ

Երբեմնի «ԶԻԱՐԹՆՈՅ» գեղարես-  
տական - գրական հանդէսը, որ երկու  
տարի լոյս տեսաւ Փարիզ՝ Հք. Բալու-  
եանի խմբագրութեամբ, կը սկսի իր  
վերիրատարակութեան՝ այս անգամ  
Տարեդիրքի ձեւով։ Առաջին հատորը  
պիտի բաղկանայ 250 մեծադիր էջե-  
րից։

Հասորը պիտի ունենայ հետեւալ  
բաժինները - 1) Հայ գրականութիւն.  
2) Օտար գրական էջեր. 3) Գրական ու-

սումնասիրութիւններ. 4) Գեղարեստի  
փիլիսփայութիւն. 5) Ճարտարապե-  
տութիւն. 6) Նկարչութիւն, ժանդակ -  
փորագրութիւն. 7) Պար. 8) Թատրոն.  
9) Երաժշտութիւն. Բաժիններին կը յա-  
ջորդէ բրոնիկի մասը, ուր մանրամասն  
կերպով կը ներկայացնին. Ա) Արեւատի  
նշանակութեան, Բ) Զրոյց - հանդիպութեան,  
Գ) Հայաստանի մշակութային տարին,  
Դ) Արտասահմանեան մշակութային  
շարժումը, Ե) Գրախօսակամներ՝ Հա-

յաստան եւ արտասահման լոյս տեսծ զիրքերու մասին, Զ) Միջազգային գրական շարժում, Է) Յոբելեաններ, Ը) Հայ Մշակոյթի կրած կորուստները: Տարեգիրքը գեղազարդւած է 120-ի մօտ նըկարներով: Տարեգիրքին իրենց մասնակցութիւնը բերել են՝ Գարեգին Արք-Յովսէփեան, Յ. Օշական, Շահան Գէրպէտեան, Շ. Նարգունի, Վէժունի, Հրաչ Զարդարեան, Արամայիս, Սրապեան, Արքունի, Թ. Ազատեան, Դեւ, Ա. Երեմեան, Ռստանիկ, Եղիշէ Այվաղեան եւ ուրիշներ: Կան անտիպ եցեր

Մ. Վարանդեանից, Կոմիտաս վարդ-դից, Մատթ. Զարիֆեանից, Թէոդիկից, Սիմիլից: Թարգ. Էջեր՝ Փրոֆ. Վ. Քթուր Բաշից, Փոլ Վալէրիից, Բերգունից, Անդրէ Սիւարէսից ու Լէոնիդ Անդրէսից: Տարեգիրքին վերաբերող ամեն բդրակցութիւն եւ այլ դիմումներ պէտք է ուղղել խմբագրի հասցեին՝ **H. PALOUIAN, 1, Rue de l'Aqueduc PARIS (10<sup>e</sup>).**

Հասորը պիտի արժէ Ֆրանսա, Սուրբիա եւ Պայքաններ 30 ֆր., իսկ մեացեալ երկիրները՝ 40 ֆրան:

